

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գեղակերտ
համայնքի ավագանու
2017թվականի հունվարի 17-ի թիվ
1 նիստի թիվ 4-Ն որոշման

**ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ
ԾՐԱԳԻՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**

**ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

Կազմել է՝ համայնքի ղեկավար

Ս.ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2017թվականի հունվարի 17-ի թիվ 4-Ն որոշմամբ

ԳԵՂԱԿԵՐՏ 2017թ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔՆ

«Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Արմավիրի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Գեղակերտ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի կազմումը և կատարումը գերակա խնդիր է համայնքում մի շարք աշխատանքների կատարման համար, որոնցից են՝ համայնքի փողոցների խճապատման և փոսալցման աշխատանքները, կենտրոնական փողոցի լրիվ լուսավորության ապահովումը, խմելու և ոռոգման ջրերի ներքին ցանցերի նորոգումը, դպրոցի ներքին հարդարումը, համայնքի սպորտդպրոցի շենքի հիմնանորոգումը, մշակույթի տան շենքի երկրորդ և երրորդ հարկերի հիմնանորոգումը /ակնկալվում է պետական աջակցություն/ և համայնքապետարանի շենքի ներքին հարդարման աշխատանքները, մանկապարտեզի խոհանոցի և բակի վերանորոգման աշխատանքները ինչպես նաև մանկապարտեզի գույքի համալրման աշխատանքները: Գիտացելով համակողմանի և ներդաշնակ զարգացած սերնդի ձևավորումը ցանկալի է, որ մանկապարտեզ, դպրոց ինչպես նաև սպորտդպրոցը լինեն համայնքի գերակա խնդիր, ավելորդ չէ նշել նաև համայնքի ֆուդբոլի դաշտի կառուցման աշխատանքները: Մշակելով նշված փաստաթուղթը ակնկալվում է պետական կառավարման մարմինների քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների լիակատար փոխընթերցում և համագործակցություն:

Համայնքի ղեկավար՝

Ս. Առաքելյան

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գեղակերտ համայնքը գտնվում է Արմավիր տանող ճանապարհի վրա, Արմավիրի մարզի վարչական տարածքում, մարզկենտրոնից 25կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևմուտք, ծովի մակերևույթից 900 մետր բարձրության վրա, իսկ Երևանից 25 կմ հեռավորության վրա:

Պետական սահմանից հեռու է 30կմ, մոտակա երկաթուղուց՝ 17կմ, մոտակա մայրուղուց՝ 3կմ, ՀԱԷԿ-ից՝ 10 կմ:

Համայնքի կլիման չոր է, թույլ տեղումներով, ձմռանը չոր ցրտեր, կայուն ձյունածածկ լինում է ոչ բոլոր տարիներին: Մթնոլորտային տեղումները սակավ են, իսկ լինելու դեպքում հորդառատ են: Հողի մակերևույթից գոլորշիացումը մեծ է: Մթնոլորտային տեղումների տարեկան միջինը տատանվում է 200-270 մմ սահմաններում, որը խիստ անբավարար է անջրդի պայմաններում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության համար: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է +11 աստիճան:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գեղակերտ համայնքի մշտական բնակչության թվաքանակը կազմում է 3172 մարդ, առկա բնակչությունը՝ 2898 մարդ, համայնքն ունի 560 տնտեսություն, վարչական տարածքը 665հա է:

2.1 ՀԱՍԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության առկա թվաքանակը	2898
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	560
2.1	այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վազոն, տնակ/ բնակվող	15
2.2	կիսակառույց տներում բնակվող	0
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	37

Համայնքի բնակչության 1351մարդ 47% կազմում են տղամարդիկ և 1547 մարդ53% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	2898	1547	1351
	մինչև 1 տարեկան	24	14	10
	1-2 տարեկան	66	34	32
	3-4 տարեկան	81	41	40

	5-6 տարեկան	87	47	40
	7-10 տարեկան	147	54	93
	11-14 տարեկան	151	72	79
	15-17 տարեկան	104	51	53
	18 և ավելի տարեկան	2238	1234	1004
2.	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	276	170	106
3.	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	4	1	3
4.	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	0		
5.	Հաշմանդամ երեխաներ	8	3	5
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	0	0	0
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0		1
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	14	0	14
9.	Հաշմանդամներ	125	60	65
10.	Զբաղվածներ /հողագործությամբ/	1720		
11.	Գործազուրկներ	240		
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	37		
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	3		

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ Գեղակերտ համայնքի վարչական

տարածքը – 665 հա

Գյուղատնտեսական նշանակության հողեր – 432.9 հա

Բնակավայրային նշանակության հողեր –154.2հա

Արդյունաբերական հողեր-15.1հա

հատուկ պահպանվող հողեր-5հա

Զրային ֆոնդեր –10.1հա

Բնակավայրի տարածքը – 565հա

ԳԵՂԱԿԵՐՑ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գեղակերտի գյուղական համայնքը /նախկին Սամաղար/ ունի հին պատմություն: Ցավոք, պատմական տեղեկություններ գյուղի անցյալի վերաբերյալ չեն պահպանվել: Բայց գյուղի պատմական անցյալի վկան 13-րդ դարում կառուցված Սուրբ Հարություն եկեղեցին է, որը ներկա պահին գործող է: Գյուղի ներկայիս տարածք, որի անունը այն ժամանակ հայտնի չի եղել, 1928 թվականի Թուրքմենչայի պայմանագրից հետո, երբ Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, Պարսկաստանի Սալմաստ հայաշատ գավառի Ուրմիա գյուղաքաղաքի Սամաղար բնակավայրից մեծ թվով գաղթականներ են եկել և տարածքը անվանել են Սամաղար: Հետագայում՝ 1978 թվականին, գյուղի օտարածին անունը փոխելու նպատակով այն վերանվանվել է Գեղակերտ, 1991 թվականին այն կրկին դարձել է Սամաղար, և սկսած 2006 թվականից նորից դարձել է Գեղակերտ:

Ներգաղթածները հիմնականում զբաղվել են այգեգործությամբ և գինեգործությամբ, զարգացրել են առևտուրը և արհեստները: Ժամանակին մեծ համբավ է վայելել Սամաղարի գինին, որը Եփրատ, Տիգրիս գետերով հասցրել են Միջին Արևելք, ինչպես նաև արտահանել են Արմավիր, Կրասնոդար, Դոնի Ռոստով և այլն:

Գյուղի դպրոցը, որ ներկա պահին միջնակարգ է, ևս ունի հին արմատներ: Առաջին եռաստիճան դպրոցը գյուղում բացվել է 1895 թվականին՝ ռուսական կայսր Նիկոլայ II-ի անմիջական թույլտվությամբ և համաձայնությամբ: Դպրոցում ուսուցումը եղել է ռուսերեն: 1927 թվականին գյուղում բացվել է յոթնամյա դպրոց, որի տեղում ներկա պահին տեղակայված է համայնքի մարզադպրոցը և որը 1934 թվականից դարձել է միջնակարգ:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Սամաղար գյուղը եղել է շրջկենտրոն, իր մեջ ներառելով Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Թալինի, Արտաշատի, Ապարանի և Աշտարակի մի շարք բնակավայրեր և 1934 թվականին իր տեղը զիջել է Էջմիածնին:

Գեղակերտ գյուղի կենտրոնում կան երկու հուշակոթողներ: Դրանցից մեկը հավերժացնում է Հայրենական Մեծ պատերազմում զոհված 117 սամաղարցիների հիշատակը, իսկ մյուս հուշարձանը կառուցված է ի պատիվ արցախյան ազատամարտիկների, որոնցից երեքը զոհվեցին այդ պատերազմում: Հուշարձանը կառուցվել է Գեղակերտ համայնքի պատվավոր քաղաքացի Ռուստամ Նիկողոսյանի նվիրատվությամբ:

Գեղակերտ գյուղը գտնվում է Արարատյան դաշտավայրում՝ Արմավիրի վարչական տարածքում, ծովի մակերևույթից 900 մետր բարձրության վրա: Մարզկենտրոնից տեղակայված է 25 կիլոմետր հեռավորության վրա՝ դեպի հյուսիս արևմուտք: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է +11 աստիճան, ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվում է հուլիս-օգոստոս ամիսներին՝ +36⁰-ից մինչև +40⁰, իսկ ամենացածր ջերմաստիճանը հունվար ամսին՝ մինչև -36⁰:

Համայնքն ունի 3178 մարդ բնակչություն, հիմնականում տեղաբնակներ են՝ ներգաղթ տեղի է ունեցել 19-րդ դարի սկզբներին՝ Ալաշկերտից և Պարսկաստանի Սալմաստ գավառից:

Համայնքում կա մշակույթի պալատ : Դա մի գեղեցիկ թամանյանական կառույց է, որը կառուցվել է անցյալ դարի կեսերին և մեծ դեր է խաղացել Սամաղարի մշակութային կյանքի զարգացման գործում: Ներկա պահին տուֆակերտ, եռահարկ մշակույթի տունը գտնվում է վթարային վիճակում, այն գործող չէ: Մշակույթի տան առաջին հարկում իր աշխատանքներն է կազմակերպում Գեղակերտի բուժամբուլատորիան, որը սպասարկում է չորս համայնքի:

Համայնքում կա մանկապարտեզ, որը գործում է երկու խմբով: Մանկապարտեզի շենքը, ինչպես նաև բակում գտնվող խոհանոցն ամբողջությամբ վերանորոգվել և կահավորվել են համայնքի միջոցներով:

Գյուղում կա ծանրամարտի դպրոց, որն ունի փառավոր մարզական անցյալ և կրում է սամաղարցի հայտնի ծանրամարտիկ, աշխարհի և Եվրոպայի բազմակի չեմպիոն, օլիմպիական խաղերի մրցանակակիր Յուրի Սարգսյանի անունը: Գյուղի մարզադպրոցի ծանրամարտիկները ներկա պահին էլ բարձր են պահում մեր մարզադպրոցի անունը՝ ամենահեղինակավոր առաջնություններում գրավելով մրցանակային տեղեր:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱԿԻՃԱԿԸ

Գեղակերտ համայնքի 2017 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի մասին տեղեկատվություններ /հազար դրամ/

հհ	Եկամուտների տեսակները	Տարեկան	
		այլան	կատարողական
1	Հողի հարկ	13500.7	13565.4
2	Գույքահարկ	4096.7	4561.2
3	Տեղական տուրք	287.0	251.6
4	ՀՀ պետական բյուջեից դոտացիա	45582.9	45582.9
5	Տարեսկզբի ազատ մնացորդ		
6	Հողի օտարումից եկամուտ	100.0	

Ծախսեր

հհ	Ծախսեր	Տարեկան	
		այլան	կատարողական
1	Տեղական ինքնակառավարում	32672.3	28956.3
2	Սոցիալական օգնություն	10000.0	10000.0
3	Մշակույթ, սպորտ և կրոն	2000.0	2000.0
4	Աղբահանություն	2500.0	2424.2
5	Նախադպրոցական կրթություն	11186.0	7817.2
6	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	3400.0	2385.0
7	Արտաքին լուսավորում	950.0	950.0
8	Ճանապարհների վերանորոգում	1000.0	1000.0
9	Կապիտալ նորոգումների ծախսեր	14394.3	5863.0

Համայնքն ունի դպրոց՝ եռահարկ և երկհարկ մասնաշենքերով նախատեսված 600 աշակերտներով, ներկայումս ունի 286 աշակերտ, ուսուցչական կոլեկտիվը բաղկացած է 27 հոգուց:

Համայնքն ունի մանկապարտեզ նախատեսված 65 սանի համար: 2015 թվականին գործել է երկու խմբով՝ 57 սան, 2017 թվականին վերանորոգման պատճառով չի գործել:

Համայնքն ունի բուժամբուլատորիա, որն սպասարկում է չորս համայնք:

Համայնքում կա 13-րդ դարում կառուցված եկեղեցի, որն ներկայումս գործում է

Համայնքն ունի ծանրամարտի մարզադպրոց, որտեղ պարապում են 180 մարզիկ տարբեր համայնքներից:

Համայնքում հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ, գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերն են՝ ելակ, կարտոֆիլ, ցորեն, վարունգ:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրեր

2004-2005թթ.-ին համայնքի միջոցներով կապիտալ վերանորոգվել են համայնքի մանկապարտեզի և համայնքապետարանի շենքերը: 2008թ.-ին փոխվել է դպրոցի տանիքը և տեղադրվել են եվրո դռներ և պատուհաններ: 2014թ.-ին դպրոցում անց են կացվել լոկալ ջեռուցում: 2009-2010թթ.-ին վերանորոգվել է համայնքի բուժամբուլատորիան համայնքի մասնակի համաֆինանսավորմամբ: ՀՄՀ ծրագրի հետ համատեղ համյնքը սպասրկող մի շարք ջրատարներում տեղադրվել են կիսախողովակներ /2500մ/: Համայնքում գործում են վեց խանութ և մեկ դեղատուն: Համայնքի եռահարկ մշակույթի տան առաջին հարկը ամբողջովին վերանորոգված է համայնքի միջոցների հաշվին:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

2017-2021թթ.-ի սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրով ըստ առանձին բնագավառների նախատեսվող ծրագրերի, միջոցառումների և աշխատանքների համառոտ ամփոփագրի

N	Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը	ծավալը	Ֆինանսական միջոցների սնորհաժեշտ քանակը /հազար դրամ/	Ֆինանսավորման աղբյուրները			Կատարման ժամկետները					պատասխանատու
				Համայնքի բյուջե	Դոնոր կազմավերություն	Այլ /պետ.բյուջե և արևմտյան	2017թ.ծավալը ֆին. միջոց	2018թ.ծավալը ֆին. միջոց.	2019թ.ծավալը ֆին. միջոց	2020թ.ծավալը ֆին. միջոց	2021թ.ծավալը ֆին. միջոց	
1	Համայնքի կենտրոնական փողոցի լուսավորում	1500	3000.0		-	-	600	600	600	600	600	Համայնքի ղեկավար
2	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում՝ փոսալցում /քմ/		5000.0		-	-	1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	Համայնքի ղեկավար
3	Համայնքում կանգառների կառուցում /հատ/	4	2000.0				-	500	500	500	500	Համայնքի ղեկավար
4	Աջակցություն համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգմանը /գծմ/	14600	3000.0				600	600	600	600	600	Համայնքի ղեկավար

5	Աջակցություններ համայնքային ոռոգման ջրատարի վերանորոգման		3000.0				600	600	600	600	600	Համայնքի վեբ-կայք	Արտոնադրություն
---	--	--	--------	--	--	--	-----	-----	-----	-----	-----	-------------------	-----------------

2.5 Ձարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման համար խոչընդոտ են համարվում հետևյալ հիմնախնդիրները

1. Արտադրված գյուղատնտեսական ապրանքի դժվար իրացում.
2. Համայնքում առկա գյուղնշանակության հողերի ոչ լիարժեք մշակություն, կապված ոռոգման ջրերի դժվար հասանելիության հետ /արտեզյան ջրերի բացակայություն/.
3. Համայնքում մշակութային միջոցառումների բացակայություն` կապված մշակույթի տան չգործելու հետ.
4. Մարզումների լիարժեք և արդյունավետ պարապմունքների ապահովման համար խոչընդոտ է հանդիսանում մարզդպրոցի նորմալ պայմանների բացակայություն.
5. Համայնքում բնակարանային շինարարության աջակցման համար մատչելի դարձնել փաստաթղթերի ձեռքբերման ծառայությունները.
6. Համայնքի որոշ փողոցների գազաֆիկացման և խմելու ջրի հասանելիության ապահովում.
7. Հնարավորինս աշխատատեղերի ստեղծում:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և սպառնալիքների /ՈՒԹՀՍ/ վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. Համայնքի աշխարհագրական դիրք. 2. Համայնքում գազի, էլեկտրականության, խմելու և ոռոգման ջրերի բավարար մատակարարում. 3. Մեծ աշխատուժի առկայություն. 4. Մանկապարտեզի առկայություն և բարվոք վիճակ: 	<ol style="list-style-type: none"> 1. Աշխատատեղերի բացակայություն. 2. Գյուղատնտեսական որոշակի հողերի անմշակ լինելը. 3. Խմելու ջրի ներքին ցանցի անմխիթար վիճակ. 4. Ներհամայնքային և դաշտային փողոցների հարթեցում, խճապատում և վերանորոգում. 5. Դպրոցի ներքին հարդարանք. 6. Մարզադպրոցի հիմնանորոգում. 7. Բուժ ամբուլատորիայի համար շտապ օգնության մեքենայի ձեռք բերում. 8. Համայնքի փոստային բաժանմունքի շենքի վերանորոգում.

	<p>9. Էլեկտրականության հաճախակի խաթարում.</p> <p>10. Մշակույթի տան երկրորդ և երրորդ հարկերի ինչպես նաև տանիքի վերանորոգում:</p>
--	---

Հնարավորություններ	Սպառնալիքներ
<p>1. Ելակի արտադրանքի ընդունում և վերամշակում.</p> <p>2. Մեծ աշխատուժի առկայություն.</p> <p>3. Զերմոցային տնտեսության զարգացում:</p>	<p>1. Բնակլիմայական պայմանները ա/ երաշտը բ/ցրտահարությունը գ/կարկտահարությունը</p> <p>2. Բնակչության արտագաղթը:</p>

3. Համայնքի նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1 Համայնքի զարգացման տեսլականը

Գեղակերտի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ձանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայրը:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

**ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՒ
Գիշերային լուսավորության անցկացում**
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գիշերային լուսավորության անցկացում						
Ծրագրի անմիջանկյալ նպատակ	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		950	600	600	600	600	600
Ծրագրի միջանկյալ նպատակ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	200	200	200	200	200
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
-		400	400	400	400	400	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Սյուների, լամպերի ձեռք բերում 1.2 Լարերի, մալուխների ձեռք բերում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Մոնտաժման աշխատանքներ 2.2 Անցկացված լուսավորության փորձարկում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1000.0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 2000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 3000.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Նյութեր և սարքավորումներ, աշխատուժ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում կենտրոնական փողոցի, հնարավորության դեպքում նաև մյուս փողոցների լուսավորության անցկացման արդյունքում համայնքի փողոցները կլուսավորվեն, կակտիվանա, կհեշտանա բնակչության տեղաշարժը գիշերային ժամերին, գույքի պահպանությունը կբարելավվի, կբարձրանա բնակչության տրամադրությունը:						

Ծ Ր Ա Պ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Պ Ի Ր Ո Յ

Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում` փոսալցում

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում` փոսալցում						
Ծրագրի անմիջական նպատակ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային և արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	600.0	600.0	600.0	600.0	600.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային և արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	400.0	400.0	400.0	400.0	400.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Սանրախճի, ավազի ձեռք բերում 1.2 Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Սանրախճի փռում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր` 3000.0 հազար դրամ Կապիտալ ծախսեր` 2000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն` 5000.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ճանապարհների և փողոցների բարեկարգում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգման` փոսալցման, խճապատման աշխատանքների ավարտից հետո կբարելավվի բնակչության նպատակների իրագործում, նախադպրոցականների, դպրոցականների հաճախումները դպրոց, մանկապարտեզ կիեշտանա: Ավտոմեքենաների օգտագործումը արդյունավետ կլինի, բնակչության աշխատանքի, հանգստի, կուլտուր կենցաղային հարցերի կարգավորման համար բավարար վիճակ կստեղծվի:						

**ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՈՅ
Համայնքում կանգառների կառուցում**
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում կանգառների կառուցում						
Ծրագրի անմիջական նպատակ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		-	500.0	500.0	500.0	500.0	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	-	200.0	200.0	200.0
	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
		-	-	300.0	300.0	300.0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Խողովակների ձեռք բերում 1.2 Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.2 Թիթեղների ձեռք բերում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1000.0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 1000.0 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 2000.0 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	կանգառների կառուցում						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում կանգառների կառուցման արդյունքում՝ հասարակական տրանսպորտին սպասելու ընթացքում, բնակչության բոլոր շերտերը՝ այդ թվում նաև հաշմանդամները կանգառներում կարող են պաշտպանվել արևից, անձրևից և մասամբ էլ ցրտից, կարող են տեղեկատվություն ստանալ երթևեկության ժամերի մասին:						

Ծ Ր Ա Պ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Պ Ի Ր Ո 4
Աջակցություն համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգմանը
 (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Աջակցություն համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման						
Ծրագրի անմիջական նպատակ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		600.0	600.0	600.0	600.0	600.0	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Աջակցություն համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	200.0	200.0	200.0	200.0
	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
		-	400.0	400.0	400.0	400.0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Խողովակների ձեռք բերում 1.2 Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Ավազի ձեռք բերում 2.2 Խողովակների մոնտաժում, փոսալցում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1000.0 դրամ Կապիտալ ծախսեր՝ 2000.0 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 3000.0 դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգմանը						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքում խմելու ջրի ներքին ցանցի մասնակի վերանորոգման արդյունքում խմելու ջուրը կմատակարարվի շուրջօրյա, կբարձրանա բնակչության կենսամակարդակը, բավարարվածությունը և տրամադրությունը, կկանխարգելվեն վարակիչ հիվանդությունները						

Ծ Ր Ա Պ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Պ Ի Ր Ո Տ

Աջակցություն ներհամայնքային ոռոգման ջրատարի վերանորոգման

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Աջակցություն ներհամայնքային ոռոգման ջրատարի վերանորոգման						
Ծրագրի անմիջական նպատակ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		600.0	600.0	600.0	600.0	600.0	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Աջակցություն համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
			-	200.0	200.0	200.0	200.0
	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
		-	400.0	400.0	400.0	400.0	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Տեխնիկայի վարձակալում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1 Տեխնիկայի վարձակալում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1000.0 հազար դրամ Կապիտալ ծախսեր՝ 2000.0 հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝ 3000.0 հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, նյութեր և տեխնիկա						
Ծրագրի հիմնական ռիսկերը	ոռոգման ջրատարի վերանորոգման						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային հողային հունով ոռոգման ջրատարի վերանորոգման արդյունքում համակարգի վերակառուցման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը, կբարձրանա մշակաբույսերի բերքատվությունը, ոռոգման ջրի կորստի բացառում:						

4. ՀԶՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀԶՀԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀԶՀԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

Գեղակերտ համայնքի ՀԶՀԾ-ի ֆինանսավորումն ամփոփված է կից ֆայլում:
 Համայնքի 2016թ. տարեկան բյուջեի ընդհանուր եկամուտները հաշվարկվել է 78102.6 ՀՀ դրամ, ընդհանուր եկամուտների մեջ՝ սեփական եկամուտները 18125.4 ՀՀ դրամ կամ 23.2%:

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

h/h	Եկամուտների տեսակը	2016թ. փաստացի	2017թ. նախատեսված	2018թ. նախատեսված	2019թ. նախատեսված	2020թ. նախատեսված	2021թ. նախատեսված
1	Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	64188.3	63693.3	65480.0	66695.0	67820.0	68930.0
2	Եկամուտներ	18605.4	18220.0	18350.0	18670.0	19170.0	20160.0
3	Ընթացիկ եկամուտներ	-	-	-	-	-	-
4	Հարկային եկամուտներ	18126.6	17500.7	18800.0	19000.0	19100.0	19200.0
5	Հողի հարկ	13565.4	13500.7	14000.0	14000.0	14000.0	14000.0
6	Գույքահարկ	4561.2	4200.0	4800.0	5000.0	5100.0	5200.0
7	Եկամտահարկ	-	-	-	-	-	-
8	Այլ հարկային եկամուտներ	-	-	-	-	-	-
9	Տուրքեր	-	-	-	-	-	-
10	Պետական տուրքեր	-	-	-	-	-	-
11	Տեղական տուրքեր	251.6	287.0	300.0	310.0	320.0	325.0
12	Ոչ հարկային եկամուտներ	227.2	241.0	250.0	255.0	260.0	265.0
13	Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վճարներ	120.6	120.0	130.0	130.0	140.0	140.0
14	Գույքի վարձակալությունից եկամուտներ	-	-	-	-	-	-
15	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ –ի կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	-	-	-	-	-	-
16	Տեղական վճարներ	-	-	-	-	-	-
17	Այլ ոչ հարկային եկամուտներ	-	-	-	-	-	-
18	Եկամուտի կապիտալի գործառնությունից	-	-	-	-	-	-
19	Պաշտոնական տրանսֆերտներ	-	-	-	-	-	-

20	Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ /դոտացիա/	45582.9	45464.6	46000.0	47000.0	48000.0	49000.0
21	Պաշտոնական կապիտալից տրանսֆերտներ /դոտացիա/	-	-	-	-	-	-

5. ՀԶՀԾ-Ի ՄՈՆԻԹՐԻՆԳ

ՀԶՀԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀԶՀԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

Կից ֆայլում ներկայացված է ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը:

ՀԶՀԾ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ (Գեղակերտ համայնք) (2017-2021 թթ.)

Պարտադիր խնդիր	Բյուջետա-վորված միջոցներ	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ֆինանսավորման աղբյուրներ				Ծախսերի դասեր		Ֆինանսավորման կարգավիճակ				
		2017	2018	2019	2020	2021	Համայնքի սեփական եկամուտներ	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	Բարեգործություն /նվիրատվություն	Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն	Այլ աղբյուրներ	Ընթացիկ ծախսեր	Կապիտալ ծախսեր	Ֆինանսավորումն առկա է	Ֆինանսավորման շուրջ ընթացում են բանակցություններ	Ներկայացվել է
Համայնքի կենտրոնական փողոցի լուսավորում		600	600	600	600	600	✓	✓		✓							
Ներհամայնքային ձանապարհների և փողոցների բարեկարգում՝ փոսալցում /քմ/		1000.0	1000.0	1000.0	1000.0	1000.0	✓			✓				✓			

Համայնքում կանգառների կառուցում /հատ/																			
Աջակցություն համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգմանը /զծմ/		600	600	600	600	600			V										
Աջակցություն ներհամայնքային ոռոգման ջրատարի վերանորոգման		600	600	600	600	600			V										

Մ Ո Ն Ի Թ Ո Ր Ի Ն Գ Ի Ա Ն Զ Ն Ա Գ Ի Ր

Գ Ե Ղ Ա Կ Ե Ր Ց Հ Ա Մ Ա Յ Ն Ք
(2017-2021 թվականներ)

Տրամաբանական մոդելի բաղադրիչ	Ցուցանիշի լիարժեք (2016)	Ցուցանիշի թիվային արժեք (2017)	Ցուցանիշի լիարժեք (2017)	Ցուցանիշի կատարողական (2017)	Ցուցանիշի թիվային արժեք (2018)	Ցուցանիշի լիարժեք (2018)	Ցուցանիշի կատարողական (2018)	Ցուցանիշի թիվային արժեք (2019)	Ցուցանիշի լիարժեք (2019)	Ցուցանիշի կատարողական (2019)	Ցուցանիշի թիվային արժեք (2020)	Ցուցանիշի լիարժեք (2020)	Ցուցանիշի կատարողական (2020)	Ցուցանիշի թիվային արժեք (2021)	Ցուցանիշի լիարժեք (2021)	Ցուցանիշի կատարողական (2021)	Տվյալների հավաքագրման պարբերականությունը			
	Կիսամյակային	Տարեկան	Ցուցանիշի ստացման աղբյուր																	
Համայնքի կենտրոնական փողոցի լուսավորում																			Ցուցանիշի ստացման մեթոդ	
Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում՝ փոսալցում /քմ/																		X	Մարզպետարան, համայնքապետարան)	Փաստաթղթային ուսումնասիրություն/հարցազրույց
Համայնքում																		X	Համայնքապետարան	Փաստաթղթային

կանգառների կառուցում /հատ/																			ուսումնասիրություն
Աջակցություն համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգմանը /գծմ/														X	ՀՀ Ոստիկանություն	Հարցում			
Աջակցություն ներհամայնքային ոռոգման ջրատարի վերանորոգման																			

ԵԶՐԱՓՈՒՄ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման և կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Ելնելով Գեղակերտ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրի ռազմավարությունից և ընդհանուր նպատակներից՝ շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրներ գտնելը, ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու նպատակային օգտագործումը: 2017-2021թթ. համայնքային բյուջեները պետք է մշակել՝ որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որոնցով հնարավոր կլինի իրականացնել ինչպես ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ծրագրեր:

ՀՀԾ-ն հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2017-2021թթ. ընթացքում ՀՀԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: ՀՀԾ-ի իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքի յուրաքանչյուր բնակիչ: ՀՀԾ-ում տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պետական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

ՀՀԾ-ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին: ՀՀԾ-ի ներքին

վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի ՀՀԾ-ի իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

Հիմնվելով ՀՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, ՀՀԾ-ի վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը ՀՀԾ-ում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի (անդամների) առաջարկած այն փոփոխությունները և (կամ) լրացումները, որոնք ավելացնում են ՀՀԾ-ի իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

ՀՀԾ-ի փոփոխությունները և (կամ) լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Աշխատակազմի քարտուղար

Ն. Հարությունյան